

ԲԱԺԱՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՒԹՅՈՒՆ  
 Պոլիսիայի համար  
 զարեկան 12 ֆր.  
 Վնասակալ 6  
 Առանձին անի հա-  
 մար Տարեկան 15  
 Վնասակալ 8  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 ֆր.  
 Վնասակալ 1.50  
 ԿԱՆՏՈՒՆԻ ՎՃԱՐՎԵԼԻ  
 Իրականացնում ենք ամսա-  
 ղիկ երեսին համար 40ս.  
 Իսկ վերջին երեսին  
 ար 20 ամսին հ. երեքին  
 անցի ունցանկերու համար  
 20 ժողովի կողմից

# ՇԱԲԱԹ

Նամակ եւ դրամ դրեք  
 Խմբագրության հասցե

Редакция «Вѣстникъ»  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

Խմբագրության հասցե

Արևմտահայկական ճեղք

( 20 ՄԱՆԹԻՄ )

Պոլիսիայի համար ճեղք

≥ 15 ՄԱՆԹԻՄ ≤

## ԼՐՈՒԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԻՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Վառնայի համար ճեղք 10 ամսին

ՇԱԲԱԹՈՒՄԻ ՆՈՒ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ Է ԿԱՆՏՈՒՆԻ ՎՃԱՐՎԵԼԻ

### Ս. ԳԱՐԻԵԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇ-  
 ԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՅԻՆ ԳՍՂԱՔԻ ՎԻՃԱ-  
 ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փոփոխողները կրնան  
 իրեն զեմել

Զար-Պորիս փողոց Վառնա

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

— 0 —

Մեր բաժանորդներէն մէկ մա-  
 սը չը նայած մեր յայտարարու-  
 թեանց, իրենց պարտքը չը  
 ճանչացան, ու դեռ կը շարու-  
 նակեն թերթ ստանալ:

Այդ անպարտաճանանչ մնա-  
 ցորդներուն ժամանակ կուտանք  
 մինչեւ փետրուար քսան, ու  
 այնուհետեւ պիտի յայտարարենք  
 անունները. իսկ ուրկարի մէջ  
 չըլճարող բաժանորդներէն օ-  
 րէնքի գիմելով պիտի գտնուենք:  
 Եարժում միշտ զրկուած է ով  
 ուզած է. ոչ ոքի առանց ուզե-  
 լու, մանաւանդ նոր խմբագրու-  
 թեան միջոցին, թերթ չէ զրկ-  
 ուած. եւ այդ ուզողներուն բո-  
 լոր նամակները պահուած են:

Բաժանորդները թող հասկնան  
 որ խմբագրութիւնս թուղթի,  
 մարքայի, տպարանի, գրաշարի  
 ստակ կը վճարէ. և երբ իր բա-  
 ժանորդները իրենց չնչին  
 պարտքը չեն վճարեր, խմբագ-  
 րութիւնը ահագին պարտքերու  
 տակ կ'իյնայ, թէ ինք կը քնաս-  
 ուի, և թէ իրեն հետ գրամի  
 հետ գործ ունեցողները:

### ԼՈՒՍՆԱԿԻՆ ԺՊԻՏԸ

— (I) —

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Երեկ քեզ լուսնակ որ յիթեր  
 անհուն  
 Ըրբը չըջանը երկրին մեր հա-  
 նուր,  
 Եւ այժմ գտայ քեզ ժպտուն հոն,  
 ուր

Տակաւն երէկ թողուցի խո-  
 հուն:

Կուզէի գիտնալ թէ ինչե՞ր տե-  
 սար,

Երբ անցար լերանց ծայրէն. ծո-  
 վերէն:

Ու հանդարտ, լուրի դիտեցիք վե-  
 րէն,

Ծանելով պայծառ շողոք սարէ սար:

Պատմէ՛, ո՛վ լուսնակ, երբ յայերս  
 անծիր

Լուսնականջ տուիր երկնից նուա-  
 գին

Արդեօք քեզ հասա՞ւ երբէք ցա-  
 ւազին

Ողբ մը, գոր կ'երգեն հոս Հայեր  
 ցանցի:

—Տեսայ ես, այո՛, ցաւերը Հայուն.  
 Մոխրի տակ թաղուած գիւղերը ի-  
 րեն:

Ուր դեռ անարգել, անվերջ կը  
 տիրեն

Արհաւիրք մահուան, սովը մնալուն:

Տեսայ ես անհուն ցաւով կսկիծով  
 Այդ դժբաղդ երկիր և իր խոր բան-  
 տեր:

Դաշտերը մինիկ թողուած որբ  
 անտէր:

Եւ արիւն հագած յորդ գետերն ու  
 ծով:

Սակայն երբ տեսայ Հայուն ցա-  
 վերէն

Ծնած քաջերը՝ կուռող անասան.  
 Եւ երբ գէնքերու որոտք ինձ հա-  
 սան:

Մուռցա՛յ վիշտերը, ժպտեցա՛յ վե-  
 րէն:

ՎԵՏԱ

### ԶՈՒՐ ՅՈՅԱԴՐ

— (II) —

Ռուսմանիայի մէջ մօտ քսան  
 հոգի հայ չափ քահանաներ կան,  
 ու ստացված և հրատարակուած  
 տեղեկութիւններէ համեմատ այդ-  
 քսան քահանաների մեծ մասը  
 քնասակար մարդիկ են և կամ թէ  
 լոկ ծիսակատարներ:

Ռուսմանիայ գաղութը չունի  
 ուսումնարան, չունի լեզու, չունի  
 հայ սրտով և զգացումներով նոր  
 սերունդը. նրա հայութեան մի-  
 ակ ապացոյցը իր եկեղեցիները  
 են, որոնց մէջ ծառայող քահա-

նաներից սպասվում է գաղութի  
 փրկութիւնը:

Բայց ներկայ քահանաներից  
 օգտակար մի բան սպասել Ռու-  
 մանահայի համար անկարելի է.  
 նոր լաւ քահանաներ ունենալը  
 կարծեմ նոյնչափ անկարելի է.  
 որովհետեւ Պատրիարք և Կաթո-  
 ղիկոս ազգեցութիւն չունին Ռու-  
 մանիայի մէջ ու, եթէ ուզենան  
 էլ, անկարող են այդ քահանա-  
 ների փոխարէն աւելի տրժանա-  
 ւոր քահանաներ կարգել:

Ռուսմանիայ գաղութը ինքը  
 պէտք է աշխատի իր զարթումի  
 համար, ինքը պէտք է աշխա-  
 տի իրեն համար ուսումնարան  
 բանալ, ինքը պէտք է իր անար-  
 ժան և քնասակար հոգեւորական-  
 ներին արտաքսի իր միջից ու  
 աւելի օգտակարը հրաւիրի. Ռու-  
 մանիայ գաղութը միայն ինքը  
 կարող է իր վիճակին դարման  
 տանել, եթէ Ռուսմանիայ գա-  
 ղութը այնքան քնած, այնքան  
 մեռած է որ չարժիքի անկարող  
 է. նրա մէջ պէտք է մտնեն թարմ  
 ուժեր, զինված դիտութեամբ,  
 հայրենանուէր սրտով և զրկանք  
 ու հալածանք յանձն առնելով  
 կատաղի, անխնայ կռիւ մղեն  
 այն խաւարի դէմ, որը տիրապե-  
 տում է Ռուսմանիային. Քահա-  
 նաների միջոցով Ռուսմանիայը  
 փրկել մտածելը կատարեալ երե-  
 ւակալութիւն է. Քահանաները  
 լրագրական յօդուածներով շրա-  
 կելու յոյսը ունենալ պարզամը-  
 տութիւն է. ի՞նչ են անում Պոլ-  
 տոյ քահանաները, ուր Պատրիարք  
 է նստում. ի՞նչ են անում վա-  
 զարշապատի քահանաները, ուր  
 Կաթոլիկոս է նստում. ի՞նչ են  
 անում առաջնորդ ունեցող քա-  
 ղաքներէ քահանաները. ոչ ինչ,  
 ոչ ինչ, ոչ ինչ:

Միթէ միայն Ռուսմանիայ  
 քահանաներն են վատ և անպէտք.  
 ոչ ամբողջ աշխարհի հայ քահա-  
 նաները, բայց մի քանի հոգուց:  
 Կովկասի քահանաները այսօր  
 էլ նոյն են, ինչ որ յիսուս տարի  
 առաջ, Տաճկաստանի քահանա-  
 ները այսօր էլ նոյն են, ինչ որ

յիսուս տարի առաջ. դուք հի-  
 մա աւելի վատ են. Հայ ժողո-  
 վուրդը թէ կովկասում և թէ  
 թիւրքիայում շարունակ առաջու-  
 գիմեց, բայց քահանան նոյն մը-  
 նաց:

ՎԱՊՂՈ

### ՅՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՍՈՒԼՈՒՆԸ



«L'oeuvre de la vie» fայտում կնի հե-  
 տեալը:

«Յունվար 11-ին Պարիզի գլխա-  
 ւոր օտտիկանապետը իւր պաշ-  
 տօնատունն է կանչում Գամառ  
 Մահմուտ փաշայի երկու տղա-  
 ներին ու նրանց հետ հետեւեալ  
 խօսակցութիւնն է ունենում:

Լէպին — Գուք պէտք է ինձ ու-  
 թոյ պատասխան տար. լսել եմ  
 որ մի քանի օրէ ի վեր այստեղ  
 են եկել թուրք խոռվարներ  
 այս ինչը այն ինչը և (անունները  
 թուում է) դուք ուղում էք այս  
 տեղ համաժողով գումարել:

Իշխաններից մին — Ձեր ասա-  
 ծը մասամբ ճիշդ է. ձեր թուած  
 մարդկանցից մի քանիսը եկել  
 են և մենք մտադիր ենք մեր  
 Ֆրանսացի բարեկամներից մէկի  
 մօտ հաւաքվել վիճաբանելու մեր  
 երկրի շահերի մասին. ու-  
 ըր մեր մօրեղբայրը սպանդանո-  
 ցի է վերածել:

(Այստեղ Լէպինը բողոքի շարժ-  
 վածք է անում)

Մենք պահանջում ենք նոյն  
 բարենորոգումները. ինչ որ անց-  
 եալ օր արտաքին գործոց նախա-  
 արար Թուրքիայի փրկութեան  
 համար անհրաժեշտ յայտարա-  
 րեց:

Իսկ գաղով մեր բարեկամներին,  
 նրանք խոռվարներ չեն, այլ  
 կայսրութեան ամենապատուաւոր  
 մարդիկը:

— Մինչեւ հիմա նրանք վտան-  
 գաւոր մի բան չեն արել, ուրեմն  
 և կարող են մեկ մօտ զբօսնել.  
 Բայց համաժողովը չը պէտք է  
 տեղի ունենայ, եթէ ոչ նրանց

վերաբերմամբ ես միջոցներ ձեռք կառնեմ :

Ես չեմ կարող հանդուրժել մի համաժողովի, որը ուղղված է մի վեհապետի անձի դէմ, որը իմ բարեկամը և դաշնակիցն է :

Իշխաններից մին—Չեք դաշնակիցը :

Լէպին—Լիովին. որովհետեւ ես մի գեսպան ունեմ նրա քովը և նա էլ մի գեսպան ունի այստեղ, եթէ ես համաժողովին հանդուրժեմ, կարտունեմ. եթէ արտունեմ, ուրեմն համակրող եմ, եթէ համակրող, ուրեմն և նպաստող եմ :

Զեզ 5 վարկեան եմ տալիս ինձ պատասխանելու համար :

Իշխաններից մին—Բայց ժամանակ տուէք որ մենք մեր ֆրանսիացի և թուրք բարեկամներին հետ խորհրդակցենք :

Լէպին— Երբեք ժամանակ եմ տալիս :

Իշխաններից մին—Թող այդպիսի լինի :

Համաժողովը տեղի կունենայ Արպարութեան և Ազատութեան մի երկրի մէջ :

Լէպին—Ֆրանսիան այդ երկրներէն չէ :

Իշխաններից մին—Մենք այնպէս էինք կարծում և գեռ կարծում ենք. ու ցաւում ենք . . .

Լէպին—Յաւալի է, բայց այս այսպէս է :

«Լէօրպէն»ի տեղեկատուն աւելացնում է որ ֆրանսական

կառավարութիւնը առասկան գեսպանից ազդեցած է այսպէս վարվում. միայն Միւնխի պէլը չէր կարող այդ բան ազդել :

Այս դէպքը շատ յուզել է թէ ավակողմեան և թէ ձախակողմեան երեսփոխաններին և նրանք արդէն դիմումներ են անում նախարարներին :

### ՈՒՍԱՆԱՀԱՅ ԲԱՀԱՆԱՆԵՐԸ

(Շար. նախորդ քիւռն և՛ վերջ)

Պորոշան.— Հոս երեք քահանաներ կար, մեծ Տ. Սալապուր Բէսիմեան անցեալ օրեր վախճանեցաւ. շատ յարգուած էր ամէն ազգերու մէջ այդ օրհնեալ ըլլալ իր յիշատակը. Երկրորդը Տ. Պողոս քահանայ Յակոբեան պատկառելի ծերուկ մը, որ իր ամբողջ կեանքը Պոթոզանցի հայուն զարգացման ու զարթումին նուիրած է. քառասուն տարիներ շարունակ ուսուցչութիւն րրած է այդ քաղաքին մէջ և շատ ձեռնասուէններ ունեցած. բայց սփոս ուր ի մեծ ցաւ այս ծերուկին, վերջին տարիներս զարգը գործած է : Ահա արպար քահանայ մը, որ իբր օրինակ կրնայ ծառայել ուսմանը իր իւր անհոգ ու անխիղճ պաշտօնակիցներուն : Երրորդը Տ. Յովնանէս, նոյնպէս աւելոր, թէեւ այս մտքը իր բնկերոջ գործունէութիւնը չէ ունեցած, բայց իր հօտը արժանապէս հովուելէ ալ երբէք ետ չէ կեցած ու միշտ անբա-

սիր կեանք մ'ունեցած է : Պոթոզանի համար անհրաժեշտ պէտք են երկու երեք երիտասարդ, ուսեալ ու ազգասէր քահանաներ, որոնք գոնէ հիններուն արժանիքն ունենային և նոր զարկ մը տային այդ քաղաքին արգասին բոլոր գործերուն :

Եւաշ.— Տ. Եղիշէ ներսէսեան, Նիկոմիդիոյ Կուրտպէլէն գիւղէն, «կեր, արբ և ուրախ լեր» ասուցուածքին հաւատարիմ հետեւողը, անհոգ, պնդադուր և միայն իր անձնական հաշիւները խորհող անպէտ մը. դպրոց մը բանսլոյ, ամէն կարելիութիւն ըլլալով մէկտեղ՝ մազի չափ չաշխատիր այդ խնդրով : Ա՛խ դեռ շատ հազ կուզէ մեր ժողովուրդը լաւը դէշէն, սեր ձերմակէն գտնելու համար և ասանկները միշտ կախորժին մեր այդ անտարբեր վիճակէն, որպէսզի ուղածնին խաղան. բայց չէ, տէր հայրեր, չէ, վստահ կէք թէ շատ չի պիտի շարունակէք այդպէս սանձարձակ ու համարձակ :

Պուրեշ.— Տ. Յարութիւն Անդրէասեան, խեղճ ու կրփայ բուն մը, գուցէ իր քահանայ ըլլալը ինքն ալ չի գիտեր, որովհետեւ չը նմանիր իսկ գալով Տ. Սալապուր Մօսկօֆեան, տեղացի, այս մարդը ինքզինքը ամպերու չափ բարձր կը կարծէ, ի՞նչ հետը խօսելու ըլլաւ, իր անձին վրայ գովեստ լսելէ կը ձանձրանաւ. մինչդեռ իրականութեան մէջ զատարկ, խաւարա՛միտ, ժողովուրդէն ատուած մէկը, արգահատելի իմաստակ մը. կրօնական խնդիրներէ լուր չունի, կելնէ զիրքեր կը թարգմանէ ուսմաներէնի և ի՞նչ դէմ խօսիս հայտնելէ զատ վէճք չունի. վերջապէս օտարներու առջեւ ծաղրածութեան առարկայ եղած մէկը : Եստ խնթօք քայլ մը ստած կըլլար եթէ փոխանակ իր կարողութեան վեր-

խնդիրներով զբաղելու, տեղոյն զպրոցին բարեկարգութեան ու իր հօտին հոգեւոր պէտքերուն խնամք տանէր : Որո՞ւ կըսես, մարդը իր գիտացէն չը խոտորի, բայց մենք պէտք է զգուշացնենք վինքը քիչ մը, համեստ ըլլալ ու պանդուխտներուն ալ հոգ տանել. աս է իր գլխաւոր պարտքը :

Յովշան.— Հոս երկու քահանայ կայ. Տ. Գէորգ Հալաճեան Սուչովացի և Տ. Պետրոս Մամիկոնեան Կիւմիւշ-խաւէցի : Ազնիւ ընթերցողը թող թոյլ տայ ինձ ըսել թէ, ասոնց վերայ խօսելը ուրիշը և կամ ուրիշ մտաւայտ առթի մը կը ձգեմ, որովհետեւ քիչ մը ընդարձակ խօսելու ստիպուած ենք շատ մը կարեւոր կէտերու պատճառաւ : Հիմակու հիմաստ չափ աւելցնենք թէ տարօրինակ ու ալլաղակ արարքներու շարքի մը առջեւ կը գտնուինք, զորոնք պիտի պարզենք մասնամասնաբար և անպատճառ :

Խոսեմ.— Մտեման Մովսէսեան Եւաշի. Խոսմանայ քահանաներուն մէջ ամենէն փառատրը, ամենէն այլաբերած օտարացածը, եկեղեցին ճիշդ յունական վերածած է դասերը բոլորովին վերցնել տալով և սեղանին ձեւը փոխելով : Սկիւնը մէջտեղ դրած է, հարուստ արիւնները ձեռքերէն կառնեն կը քննեն ինքն ալ կը խնդայ, Երկու հատ ալ աւազան շինել տուած է, մին պղինձէ՛ միայն արգաստներուն համար. իսկ միւսը արծաթեայ՝ հարուստներուն յատկացուցած է :

Ա՛խ ասանկ անհոգի ճիւղները չեն որ քառասուն հազար հայուն կորստեան պատճառ եղած են, կը զարմանանք որ տեղոյն հողաբարձութիւնը հակառակ իր բարեպաշտի համբաւին թոյլ կուտայ այդ չ՛բա-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՆՀԱՍՍՎԱՆԱԼԻՆ

#### ՄԱՍ II IV

Վարդապետի և երբեմն յեղափոխական պաշտօնեայի հետ ճաշելու երկրորդ օրը՝ Վահէն նոյն երիտասարդ ուսուցչի հետ ման էր գալիս Վարդապետի մէջ այդ գիւղաքաղաքի հետ ծանօթանալու նպատակով :

Նա բաւական թւով գեղեցիկ, երկարականի տներ տեսնելով կովկասեան այդ յետ ընկած անկիւնում, զարմացմամբ օտեց իր ուղեկցին :

—Որչափ ինչ յայտնի է, Վարդապետ որ ոչ մի հարստութիւն չունի, նա ոչ ինչ չի արտահանում, և ոչ էլ մի վաճառչահ սեղ է. այսքան գեղեցիկ տները որ տեղից են բուսել, ինչ որովին աղքատ տեղ էի երեւակայում :

Ծեմարանի ուսուցչիչը ծիծաղելով պատասխանեց. — Եստ լաւ նկատեցիք. Վարդապետը վաճառչահ տեղ չէ ոչինչ էլ չի արտահանում, մի յետ ընկած ջգաւաւ է. ոչ մեծաքանակ զօրք կայ, ոչ էլ բարձրաստիճան պաշտօնեաներ կան : Ծեղայիններից ուրիշ տեղ գալիս ավաճողականներ էլ չը կան, որ ուրիշ տեղ հարստանային և այստեղ աներ չինէին : Վա-

զարշապատի հարստութեան աղբիւրը դարերով էջմիածինն է եղել, իր վարդապետներով և եպիսկոպոսներով : Ամեն մի աղբեցիկ եպիսկոպոս ու ճարպիկ վանահոսն Վարդապետի մէջ աղբակն ունի. սանահէր, կնքահայր, հորեղորթ թոռ, հորաքրոջ թոռ. վերջապէս ու է ազգական : Այդ ազգականները մեծ մասամբ հնարովի, ստեղծովի են . . .

Եւ Վարդապետի գեղեցիկ տները մեծ մասամբ վանականների այդ տեսակ ազգականներին են պատկանում : Վանքի այգիները, միւս կալուածները, նոխիրները այդ տեսակների ձեռքով են կառավարվում : . . .

—Ուրեմն զարմանալի չէ որ էջմիածնի վանքը միշտ աղքատ է . . .

—Այո, ոչ միայն զարմանալի չէ, այլ և բնական. Վարդապետի կիները գիտեցել են և դեռ գիտեն, ու կը շարունակեն գիտենալ էջմիածնի հարստութիւնը կլանել : էջմիածնի վանականը մտաւոր գրադմունք չունի, նա կուշտ ուսում է, կարողանում է դրամ ունենալ. ունի առողջ, անասնական մարմին, ունի այդ մարմնի անստանական պահանջներին բաւարարութիւն տալու դրամը. իսկ մնացածը արդէն Վարդապետան է մատակարարում. Ո՛հ, եթէ Վարդապետի պտտութիւնը դրող մի Բօկաչիւ լինէր, ի՛նչեր պէտք է գրէր :

Իրանց պիտութեան և կոպտութեան չափը յոյշ տալու համար պատմեմ ձեզ մի քանի դէպքեր, մի ծայրագոյն վարդապետ ձեմարանի բժըշկին հետեւեալն է պրում. «Պարոն

բժիշկ, փոր իմ կապ բնկեալ է. փութա՛ ջանի ինձ :» Մի ուրիշ նշանաւոր եպիսկոպոս. կրկին ստամոքսի ցաւ ունենալով՝ բժիշկին հրակիրում է. և երբ բժիշկը նկատում է թէ շատ է կեղեկ, եպիսկոպոսը պատասխանում է. «չէ, բալամ, բան չեմ կերել, կերածս երկու ջուրեմ (Վարդապետի ջուրեմները շատ մեծ են լինում), կէս հաւ, մի աման տուրմ, կէս ձմերուկ չորս դեղձ » :

Բժիշկը շարած պատասխանում է. «ճիշդ սրբազան, բաւական քիչ էք կերել :

82 թուականին, մի եօթնասուն տարեկան եպիսկոպոս, իր մօտ աշխատող մի աղքատ ԷՅ տարեկան աղջկայ վրա յարձակում է գործում երիտասարդական թափով. . . Եպիսկոպոսը իր այդ սխալ գործութեան համար ձեմարանի ուսանողներից ըստացաւ «Մեր ժամանակի հերոս» տիտղոսը : Ու այդ ամենը սովորական բաներ են էջմիածնի մէջ. Գէորգ Կաթովիկոսը այնքան լաւ էր ըմբռնել իր վարդապետներին և եպիսկոպոսներին մտաւոր ու բարոյական անկեալ վիճակը-որ ձեմարանի ուսանողներին միշտ նրանցից հետո էր սրահում :

Բաներ շատ կան պատմելու, բայց չարժէ զբաղվիլ դրանցով :

—Եւ մենք գանգաւորում ենք մեր քահանաների դէմ. երբ մեր ամենամեծ վանքը, մեզ համար քահանաներ մտաւորաբար բարձր հոգեւորականութիւնը այդ վիճակի մէջ է գտնվում : էլ ի՛նչ կարելի է սպասել, նախ այդ ձեռնադրողները պէտք է փո-

խել, արմատախիլ անել, այնժամանակ լաւ քահանաները իրանք իրանց մէջտեղ կը դնեն, առարկեց Վահէն :

—Փոխել բարձր հոգեւորականութիւնը. ու՛մ միջոցով և ի՛նչպէս :

Ժողովուրդը պէտք է փոխել, ժողովուրդը, այն ժամանակ ամեն բան կարգի կը մտնի, պատասխանեց ուսուցչիչը :

Այդպէս խօսակցելով Վահէն և ուսուցչիչը բաւական իրար ման եկան : Երկուսն էլ մօտ Վահէն գնաց իր սենեակը : Նա շատ անհանգիստ էր : Ուսուցչի պատմածները նրա վրա շատ վատ էին աղբիւր, բայց տնտեսագետութեան զլլաւոր տատաճողը Չարուհին էր, որը այսօր իր ծնողքին պէտք է յայտարարէր իր Պարսկաստան գնալը : Նա հայրենիքում չէր կարողացել յայտնել, ուստի մահանայով էջմիածին էր բերել, այնտեղ յայտնելու համար իր վերջնական որոշումը :

Վահէն շատ էր աշխատել Չարուհին ետ կացնել իր որոշումից, այնքան չէր մտածում որ Չարուհին Պարսկաստանում անհանգիստ կը լինի. այլ մտածում էր որ ինքը, նոյն տեղը, անկարող պէտք է լինի Չարուհուն մեծիկ թողնել օտար երկրում, օտար պայմաններին մէջ և կուր դաշտը նետալի :

Վահէն մտածում էր, և իր սենեակի լուսամուտից դիտում լճի ավեր, որ ծառերը, մեղմ քամուց օրօր վեղով՝ սգաւորների նման տարտերուն մ էին իրենց կորացած վրտները :

(Շարունակելի)

հանային աջ ու ձախ աւել ու ա պակասել. կարծեմ թէ ուրիշ առ թիւ աւելի խիստ խօսելու պիտի ստիպուինք այս կրօնականին վրայ:

Սիրելի ընթերցող, հոս կը լինայ Ռուսականայ քահանաներու թիւը Ահաւասիկ անճոռնի հաւաքածոյ մը որուն մէջ հազիւ երեք չորս հատ ընտրելուներ կը գտնուին. իսկ մնացեալք ամէնը իրենց տգիտութեամբ անտարբերութեամբ ու գործած տեսակ տեսակ չարութեամբ անտանելի եւ ասով նաև խեղճ ժողովուրդին ա կամայ օտարացման շարժառիթ գտնալու չեն վարանած ու չեն սթա փիթ ալ դեռ:

Յանցանքը. — ժողորուրդէն աւելի պաշտօնական հոգաբարձութիւններուն, որոնք շատ ատեն պաշտպան կը հանդիսանան իրենց առջև թնոզ քահանաներուն եւ ականջներին կը գոցեն շարունակ եղած բողոքներու դէմ: Քանի մը աղաներ, չեն շիկնիր նաև երբեմն ալ սուտ բայց նպատակաւոր վկայութիւններ ալ իրենց «տէր պապային» վրայ, երբ հարցում մը ուղղիտ անոր վարք ու բարքի մասին, կարծեմ մեր ուսուցնասիրութեան ընթացքին մէջ ոչ նուազ խիստ պիտի վարուինք քանի մը քաղաքներու հոգաբարձութիւններուն դէմ, որոնք թուլութեան գաղաթնակէտը հասած են:

Հապա Պատրիարքարանին պատասխանատուութիւնը, «ոռմա» հայ քահանաներու մասին, չափ սահման չունի: Այդ մասին կարժէ առանձին յօդուածով ծանրանալ ի կարգին:

Յօդըսն Ս. ԳՈՌԱՅՐ

### ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Անցեալ տարուան ուսական խռովութիւնները այն ազդեցութիւնը ունեցան, որ ուսական վարութիւնը որոշեց փոքրիկ զիջումներ ընել ուս մտաւորապէս զօրեղ տարրին. նախ դասական ժիմնազերու մէջ կը ճատուեցան յոյն եւ լատին լեզուներու դասերը. յետոյ ընթացեալ գարնան տարուան իրաւունքները քիչ մը լայնացան. և վերջապէս մօտերս կըրթական նախարարը համալսարանի ուսանողներուն արտօնեց զանազան բարեգործական և կըրթասիրական ընդերութիւններ հիմնել, վարել ինքնուրոյնաբար, բայց համալսարաններու վարչութեանց վերին հսկողութեամբ: Արտաբուստ զօրեղ, Յրանասն, Թուրքիան, Աւստրիան սոսկացնող Չարին կառավարութիւնը ստիպուեցաւ իր դէմ ըմբոստացող ուսանողութեան և փոքրաթիւ ժողովրդին գոնէ քչիկ մը զիջանիլ:

Եւզուր չէին Ռուսիոյ այդ զիջումները. համալսարանական կըրթակ և աւելի լայն պահանջներ ունեցող տարրին թիւը տարեկան տարի կը մեծնայ. գործարանական կեանքի արագ ցարգացման պատճառով, գործաւորներուն թիւը սկսած է բազմա

պատկուելի և պատկառելի թիւի մը հասնիլ: գործաւոր գաւա կարգին մէջ ուս ընկերվարականները կը ցանեն ըմբոստութեան և լայն ազատութեան սերմերը, գիւղացին հարչերու տակ ծանրաբեռնուած. անբերրութեան սնանկացած և հոգէն զրգուած դժգոհ իր վիճակէն ու բաղգէն քաղաքները կը թափի միանալու զժգոհ գործաւոր և մրտաւորապէս զօրեղ տարրին հետ:

Աւայդպիսիով ուսական միպետութեան մէջ օրէ օր կը բազմանայ այն տարրը, որ պետական վարչութիւններու ձեւերը կերպարանափոխելու ամենակարեւոր ու վտանգաւոր գործօնն է: Եւ ուս կառավարութիւնը ատ փաստը շատ աղէկ կերպով կը տեսնայ, որ շափ արտաքուստ վէս ու գոռոզ, ներսէն կը դուրսայ. իր սահմաններէն մօտիկ ամինայնչին պատերազմ մը զինքը կը սոսկացնէ, որովհետեւ ուսական միպետութեան ներքին թշնամի «հիտրան», կը կազմակերպէ իր հազարաւոր և միլիոնաւոր զըլուխները:

Եւրոպական զօրքերու Էրինատանէն վերադառնալէ վերջ շինարարները վերջապէս Բէքին վերադարձաւ. Եւրոպացիներուն և ժողովուրդին անմատչելի երկնային կայսրը, վերջին պարտութեան պատճառով ստիպուեցաւ ոչ միայն Եւրոպական դեսպանները իր ներկայութեանը ընդունիլ, այլև չին ժողովրդին երեւնալ: Այլի կայսրուհին, Եւրոպացիներու դահլիճը, անգամ ստիպուած եղաւ դեսպան նիւրու կիները, իրենց մանուկներով միասին, իր ներկայութեանը ընդունիլ և ակռաները սղմած, բայց յպիտը երեսին անոնց հաճոյախօսութիւններ ընել:

Բայց միւս կողմէն Չինաստանի կայսրուհին ուրիշ բաներ կը խորհի և կընէ. ան որոշեր է շատ մը չին երիտասարդներ քրիկ Եւրոպացի կըրթութիւն ստանալու, մանաւանդ զինորական: Ճարոնէն սպաներ հրաւիրեր է չին զօրքեր մարզելու. մէկ խօսքով կայսրուհին համոզուեր է որ միայն Պօքսըրներով չը պիտի կրնան Եւրոպացիներու հետ զըլուխ ելլալ, ուստի որոշեր է Եւրոպացիներէն սովորիլ զանոնք յայլթելու համար:

Չինաստանի Եւրոպացիներէ գէշ բաներ շատ սորվեցաւ, ու վերնաուեցաւ. հիմա, ալ ինքզինքը պաշտպանելու ձեւը սովորելու տըրամադիր կերեւի:

### ԽՍԿԵՆՏԵՐ ԳԱԼԲԱԲՃԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Փարիզ 1 փետրուար 1902

Այսօր Փարիզու պատճական գաւտարանի 10րդ. ատեանին առջեւ տեղի ունեցած է Խսկէնտէր Գալբաբճեանի գաւտարութիւնը: Պ. Խսկէնտէրի և Պ. Գալբաբճեանի վկաները, միահամուռ, Խսկէնտէրի հակառակ. կը յայտարարեն թէ՛ պ. Գալբաբճեան 1901 յուլիս 31ի Փարիզու հայոց գաղթականային ժողովին մէջ ան պատուիչ խօսքեր րրած չէ պ. Խսկէնտէրի դէմ. բայց կաւելցնեն որ ըսած է թէ պ. Խսկէնտէր, իր իսկ պատուոյ ատեանի առջեւ խոստովանութեամբ, 100,000 (հարիւր հազար) ֆրանքի հաշիւը չէ տուած հրայտարակային կերպով. թէ Խսկէնտէր եղած է թէյլ և «նէկիլիճան» մէկը իր ազգային գործունէութեան մէջ և թէ իր ներկայութիւնը նոր կազմուելիք Հայկական Միութեան մէջ կրնայ իր անպատեհութիւնները ունենալ, քանի որ այդ միութեան ծրագիրը ազգային տեսակէտով մեծ գործեր տեսնել է և այլն»:

Պ. Խսկէնտէր զգացած էր նախապէս որ այդ կողմէն չը պիտի կրնայ մեծ բան մը յուսալ. բայց վհատող մը չէր ինքը, ամէն միջոց գործադրած էր առանց սնոր մաքրութիւնը նկատելու, իր փոստաբանը զինած էր պ. Գալբաբճեանի դէմ անպատուող(?) տեղեկութիւններով, զորս այս վերջինը, նեղը ինկած չը վարանեցաւ իր կարգին գործածել:

Պ. Խսկէնտէր իր ոճիւր պ. Գալբաբճեանի երեսին կը նետէ, իր փաստաբանին բերնովը. սա խօսքը. Պ. Գալբաբճեան Փարիզու մէջ, հայկական յեղափոխութեան և խռովարարութեան պեան է»:

Որքան փայփայիչ պ. Գալբաբճեանի համար, իրեն դէմ ուղղուած այս բողոքի հաստատութիւնը, Թողուք պ. Խսկէնտէրի շարակամութիւնը, որով կը կարծէ պ. Գալբաբճեանին մերանայի Արևելեան լեզուներու վարժարանին մէջ գրաւած բորձը պաշտօնին վրասել, և հարցնենք իրեն մի՞թէ զմայլել է չէ իր բանդազու շանքը որուն միացուցած իր արեւելցի երեւակայութիւնը, Փարիզու մէջ, մատնութեան մը հոյկերը կառնէ ու թրքական գաւտարանի մը մէջ կը կարծէ ինքզինքը... Պ. Գալբաբճեան, շղթայակապ Աւարպիտարայրու պարտեցին: (Խսկէնտէրի երազը):

Ըսենք հոս, բարձրաձայն, թէ պ. Գալբաբճեան, երբէք իր անձին փառքը իր ազգային գոր

ծունէութեան ի սպաս գրած չէ պ. Գալբաբճեան հոն եղած միշտ, ուր ազգային ձայնը զինքը կանչած է:

Եթէ ըստ Վարնայի մէկ թերթին փարիզեան թղթակցիցի պ. Ներկակենցապին, հոգ չէ թէ ինքը ներկայանայ ուրիշ անունով, պ. Խսկէնտէր Փարիզի հայոց «Լեւոնտարան» (Երզնէ) պ. Գալբաբճեանի փառացած Գրիտասը, հայկական պատին իր քրակը և անձը չի խնայող ճարտարութեամբ եղած է:

Վարնաք պահպանողակէն Խսկէնտէրին յեղափոխութեան գէմ պաշտօնական վարի մը մէջ արտասանած հայհոյանքը սակաւ բարոյականի նմանէ վարնաք ապուսկը տղաւ իր քիլին բերին: Պ. Տըլիկան, Փարիզու ամենէն նշանաւոր փաստաբաններէն պ. Գալբաբճեանի պաշտպանը, երբ խօսք արտաբանեց իր յիշուած ճահարութեամբ մը, պիտի չըզգաց հայուն դէմ, իր օրոք տարազովը, հայ լեզուովը թիւնը պաշտպանելու: Քանի մը թիւնը ներկայացուց զաշխարհը շարժերու օրաւճմիթ արեւալիքը, որուն առջեւ, ըստ նոյն իսկ օտարներս չը կրցինք անտարբեր մնալ. ու պ. Գալբաբճեան եթէ եղած է յեղափոխական մը, իր ազգային ամենէն մեծ և նուիրական պարտականութիւնը կատարած է. այդ ապացոյց մըն է թէ ճափահարելի անտարակոյս, իր զգացումներու աղնուութեան, որովհետեւ չի կրնար անտարբեր մնալ իր եղբոր, իր հայրենակցին գժբազգութեանց առջեւ եւ թէ պ. Խսկէնտէրի պաշտպանողականը իր պահպանողականութեան մէջ կը կայանայ և պ. Գալբաբճեանի յանցանքը իր յեղափոխական մը ըլլալուն մէջ պիտի խնդրէ ինք որ իրենց վկայներով աւ փաստերով հոս ցուցնեն այդ բանը և ոչ թէ խօսքովուց այն ատեն աւելի պիտի չընեն:

Մեր ազգային պրծանապատեւ ուրթիւնը անպատուելու համար Խսկէնտէր ասկէ աւելի լայն միջոց մը չէր կրնար խորհիլ. որ մի՞թէ տարօրինակ է այսպիսի ապերասան յայտարարութիւն մը Պ. Խսկէնտէրին կողմէ. և երբ կուզէ ֆրանսական ատեանէն ունէթիֆիքա՞ մը առնել չի պատուաւորութիւնը հաստատելու հետապետիկեթով (2) աս անգամ ու համարձակ մարքը և թէ չընեն իր խղճին վրայ ճնշող բնոյ մը, ուղղակի առանց վարնաքի պ. Գալբաբճեանի դէմ պարտեցին կայացուցիչն էր Փարիզու թիւ մը հայերու, պէտք էր ան

(2) Սորհրդաւոր եւ անմատչելի «զուրան» մը անտարակոյս կ'ընէ «խոր-վիրապ» մը (միշտ աւանախանական) . . . գումարներու և գումարներու:

ԿԵՏ

գային մամուլին մէջ ներկայաց-  
նել 100,000 ֆրանքի հաշիւը .  
Ու դարձեալ ինչու պատժական  
ատենին դիմել և ոչ վերաքն-  
նական ատենին, որ իրողու-  
թիւնը կը քննուի և ոչ բարձր .  
Պ. Իսկէնտէր գիտէր որովհետեւ  
թէ պատժական ատենին մէջ  
եթէ մէկը դառնա՞նք ես անուանած,  
կը դատապարտուիս, որո՞ղք նմա-  
նապէս . «ձեզ չեմ յարգեր» խօս-  
քով իսկ կը դատապարտուիս  
հոն, վերջապէս . Ինչ որ պ. Գալ-  
բաքեանի պարագան է, պար-  
զապէս .

Պ. Իսկէնտէր «իրողութեան»  
քննութեան խոյս տուած է .

Ինչչեղաւ դատին վախճանը .  
Պ. Գալբաքեան իր խիզախու-  
թեան և ազգային դատին հա-  
մար ամէն բանի յանձնառու տը-  
րամագրութեան մը ապացոյց  
տուած է .

Պ. Իսկէնտէրի կոչնագրին մէջ  
իր դէմ եղած նախատինքին  
թուականը նշանակուած չըլլալով  
գատը ոչնչացած էր, բայց պ.  
Գալբաքեան խուսափողական  
ճամբայ գտնել ոչ միայն չըմտա-  
ծեց այլ և ինքը իր բերնովը  
յայտարարեց Յորէնքի խստու-  
թեան տակ ինկող այդ մոռցուած  
թուականը և դատավարութեան  
բեկանումէն օգտուելու ցած մտա-  
ձուժը արթնցնել չը տուաւ իր  
հակառակորդին մտքին մէջ .

Պ. Իսկէնտէր՝ երբ հարցաքն-  
նութիւնը վերջացաւ, 5000 ֆր.  
շահու փաստագրանքով դատարա-  
նէն իր փաստաբանին բերնով ու  
պաշտպանողականով .

Ու երբ պ. Տըլիկան իր ջախ-  
ջախիչ ճառը աւարտեց, այնքան  
ջախջախիչ պ. Իսկէնտէրի հա-  
մար, որքան իր փաստաբանին,  
պ. Ալպէզ Քլէմանս'սի, եղբայրը  
Ժոզեֆ Քլէմանս'ի, որ այնքան  
նշանաւոր յօդուածներ նուիրից  
Տրէյֆլիսի դատին, որ սակայն  
չը կրցաւ հակառակ իր պաշտօ-  
նին բերուծին քանի մը ծանր  
խօսքեր ընելէ զուգար ինքզինքը,  
ըսելով որ այսօրինակ խնդիրներ  
ցատալի է որ ֆրանսական դատա-  
բանի առջև կելլեն . Ատենին  
նախագահը յայտնեց սակայն որ  
պ. Գալբաքեան չէ ուզած այն-  
քան ալ պատուել զ'Իսկէնտէր,  
երբ անոր իբր հրաւիրագիր  
զրկած նամակին մէջ, որովհետեւ  
սպառնաւ ինքն ատոնք, որո-  
ւնի և «յարգանք» լրտերը  
թէ և ինքը չէ ջնջած, սակայն  
խորհուրդ տուած է պ. Գալբաքե-  
անին (այս բանը պ. Գալբաքեան  
կրնար գրծել եթէ ուզէր, որով  
պ. Իսկէնտէր շուր պիտի ծեծէր)  
«առանց այդ բաներուն» ձեռ-  
գիր նամակագրել .

Ու պարոն Գալբաքեան 50 ֆր.  
տուգանքի և 100 ֆրանք ալ պ.  
Իսկէնտէրին պատուոյ շահու փա-

սին դատապարտուեցաւ .  
Իսկէնտէր իսկէնտէր . Եթէ 5000  
ֆրանք ալ դատապարտուէր պ.  
Գալբաքեան, այդ գումարով  
ձեռքարկուի արձան մը չի պի-  
տի կրնայիք կանգնել . 100 ֆր-  
անքը, ասկից վերջ անպատիւ  
վարագոյրի մը ետին պահուած  
ազգային խոչըր՝ գումարին (100,  
000 ֆրանքի) մէկ շնչին միու-  
թիւնը կը կազմէ, որ ձեզ կը  
յանձնուի դատարանական ճամ-  
բով, որուն հաշիւը չի պիտի  
կրնաք չը ներկայացնել . Ու այդ-  
խորհրդաւոր կծիկը, ու ուն ծայ-  
րը քակուի սկսաւ, պիտի քակէ  
գուցէ իր ոյր-տենեան մէջ ձեր  
ամբողջ էութիւնը, որ մինչեւ  
այսօր պատուաւոր քուր մը տակ  
տեսնել սիրած էինք .

Կը զրկեմ այս պահուս իսկ իմ  
զայրոյթիս բաժինը պ. Գալբաք-  
եանին մասնակցելու համար  
այն նախատինքի գումարին, որ  
ծախեցիք մեր ազգային արժա-  
նապատուութիւնը, յեղափոխու-  
թիւնը և խողտողուած հազարա-  
ւոր եղբայրներու ու քոյրերու  
խշատակը, գումար մը զոր կը  
նետենք ձեր երեսին .

Բայց զիտցած եղիք ճշմարիտ  
պայքարը նոր կը սկսի . . .

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիչի մէջ ֆրանսերէն ամէն  
լեզուով ինչպէս և հայերէն «Էսթի-  
ուէսթ» անունով թղթակցու-  
թիւններ կը հրատարակուի .

Էսթ ու Էսթիւն տնօրէնը Մե-  
լիք Ս. Դաւիթ բէկն է .

— Նոյն թերթէն կիմանաք  
որ Բարիչ Պօլսոյ մէջ քսան տա-  
րիէ ի վեր յայտնի գրագէտներ  
ամսաթերթ մը պիտի հրատա-  
րեն, հանդէսը պիտի պարունակէ  
միայն գրական նիւթեր, բայց  
գրականին բոլոր ճիւղերն .

— Բարիչի հայոց բարեգոր-  
ծական ընկերութիւնը կը պատ-  
րաստուի մարտի մէջ երեկոյթ  
պարահանդէս մը տալու .  
Երեկոյթը յաջողցնելու համար  
ֆրանսացիներէ և հայերէ խառն  
յանձնախումբ մը կազմուեալ է .

— Զմիւռնիոյ առաջնորդին  
խաձեռնութեամբ տեղոյն ներ-  
սէս որբանոցին համար հանգա-  
նակութեան ոկսեր են . Գանի մը  
օրուան մէջ 200 ոկի հանգանա-  
կուէր է .

— Աղթամարայ Լիմ ու կտուց  
անպատենքու մէջ գիշերթիկ  
վարժարաններ բացուեցին .

— Տիրանակերտի մէջ կիւ-  
նայք սկսեր են նպաստ հաւա-  
քել ազգային վարժարանաց հա-  
մար .

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Գերմանական կայսրը, Բաղտատ-  
գծին շինութեան իրատէն ստացու-  
լէն յետոյ, հեռագրով մը Սուլթանին  
յայտներ է որ այդ արտօնութիւնը  
տուած օրը, Թուրքիոյ յառաջդիմու-  
թեանը պատմութեան մէջ յիշատակե-  
լի պիտի մնայ . Այդ ապացոյց է նա-  
եւ որ Թուրքիան վստահութիւն ունի  
Գերմանիոյ ուժին և ճարտարարես-  
տութեան վրայ : Վիլհելմ յոյս կը յայտ-  
նէ որ Սուլթանը ոչ միայն այդ գրծին  
շինութիւնը պիտի վերջացնէ, այլեւ  
պիտի անով օգտուի երկար տուն :

— Մարիցայի հեղեղման պատճառաւ  
Պոլսոյ և Սօֆիայի միջեւ երկաթու-  
գային յարարութիւնները խլուած  
են .

— Ալեզիրը հրամայած է ուսումնա-  
սիրել օսմ. պարտքին երեք շաբթբը  
միացնելու ծրագիրը

— Սամոսկղզւոյն ձերակոյտի ան-  
դամները խնդիր մը մատուցեր են ո-  
րով կը յայտնեն թէ Միխայիլի պէ-  
տին Սասոս կղզիին իշխանի մայր վը-  
տանգաւոր պիտի ըլլայ կղզիին խա-  
ղաղութեան տեսակէտով որով ան գէշ  
կը կառավարէ :

Կը խնդրուի գօմիսէր մը զրկել քն-  
նութիւնը մշակատարելու և Միխայի-  
լին արտաքուտու :

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Թօյսթօ կրկին ծանրագէս հիւանդ  
է .

— Թուրքական Լեհաստանի փոքրիկ  
քաղաքի մը ծիմնադրի աշակերտները  
կը պահանջեն որ շիտոնքը լեհերէն դա-  
սախօսուի . դպրոցին տնօրէնը այդ  
պահանջը չի կատարեր . աշակերտնե-  
րը կը մըտտանեն, ուսուցիչն դատա-  
գրեցեր կը պատուեն . լուսամուտնե-  
րու ապակիները կը կոտորեն . Ամ-  
բողջ քաղաքը իրար կանցնել, որով-  
հետեւ յոստիկանութիւնը կը միջա-  
մտէ :

— Օտեսայի ծովային վտուշութեան  
իշխան կառավարիչ, յայտարարեր է  
որ իրեն իշխանութեան տակ գտնուած  
գրամասնուկէն, որուն բանալին իր  
քով կը գտնուի եղեր, երկու միլիոն  
րուպլի անյայտացեր է : Մնտուկ էն  
ամուր տեսակէն եղած է : Սյոնքն  
գրամները գողցուած են, Զարբախ-  
պուեր է, այդ իշխանը միայն ժամա-  
նակով արտաքուտ :

#### Ա Ն Գ Լ Ի Ա

Անգլիական երեսփոխանական  
ժողովին մէջ Էվէնսին առա-  
ջարկեր է միջոցներ է պուրկ օ-  
ստորականներուն Անգլիա մտնե-  
լը արգելել :

Լօրտ Պալֆուր պատասխանած  
է թէ ճիշդ է որ այդ տեսակնե-  
րուն Անգլիա գալը գէշ հետե-  
ւանքներ կուեննայ, սակայն ի  
նկատի պէտք է առնել և այդ  
խնդիրը լուծելուն հետ կցուած  
գժուարութիւնները :

#### Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

— Սօֆիա, ուսուցիչ մը, որ  
վաղուց պաշտօնէ հանուած էր,  
նախարարը աորճանակով կը  
թական նախարարը սպաններ է  
անոր պաշտօնատան մէջ և ապա  
ինքը զինքը :

#### Զ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Կառավարութիւնը որոշեր է առան  
ձին պատուարակութիւն մը զրկել Ա-  
մերիկա . շնորհակալութիւն յայտ-  
նելու այն սիրայիք քաղաքականու-  
թեան համար որ Ամերիկայ ունեցաւ  
չինական խողտութիւններու և հաշ-  
տութեան լանակցութեաններու մի-  
ջոցին :

#### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ  
խումբը» ան շրջանին մէջ վերս-  
կած ըլլալով արգէն իր պա-  
րապունքները, ձեռնարկած է  
նաեւ պարբերաբար հրատարա-  
կելու եւրոպական ձայնագրու-  
թեամբ հայկական հին եւ նոր  
քառաձայն երգեր, մաքուր թղ-  
թի վրայ, յստակ վիճագիր .

Այս առթիւ երգեցիկ խումբի  
վարչութիւնը ներկայիս կը յայտ-  
նէ Պուլկարիոյ և արեւմտահայաս-  
տանի երաժշտաւէր հայ երիտասարդու-  
թեան, որ եթէ առ երգերէն  
փափագողներ կան, հաճին դի-  
մել վարը նշանակուած հասցէին՝  
վճարելով յմէկ թուղթին հա-  
մար 20 սանթիմ. փոստի ծախսը  
մեր վրայ, կան երգեր որոնք  
մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-  
կանան .

Արտասահմանի համար 35 սնթիմ.  
Ֆիլիպէ վարը. «հայկ. երգե-  
ցիկ խումբի»

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

### L'EUROPÉEN

Շարաթաթերթ քաղաքական, մի-  
ջազգային իրաւունքի, բնկերական  
հարցերու, գրական եւ դեղարուես-  
տական :

Տարեկան 15 ֆր.  
Վեցամսեայ 8 ֆր.  
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

#### Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Вагнѣ